ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
“ԴԻՎԻՍԱ ԷՅ ԷՄ” ՓԲԸ
ՏՆՕՐԵՆԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՄԱՆ ԹԻՎ Վ10 -17
“29” Մարտի 2017 թ

“ԴԻՎԻՍԱ ԷՅ ԷՄ” ՓԲԸ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Սույն հրահանգով /այսուհետ՝ Հրահանգ/ սահմանվում են “Դիվիսա Էյ Էմ” ՓԲԸ /այսուհետ՝ Ընկերություն/ կողմից անկախ աուդիտորական կազմակերպության կամ աուդիտորի / այսուհետ՝Աուդիտոր/ ընտրության կարգը և Աուդիտորին ներկայացվող պահանջներն ու չափանիշները:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Հրահանգով սահմանվող կանոններն ուղղված են ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված պահանջների կատարմանը, դրանցով, մասնավորապես, մանրամասնեցվում են Աուդիտորի ընտրությանը ներկայացվող պահանջները և չափանիշները, նկարագրվում են այդ չափանիշների գործնական կիրառումն ապահովող ընփացակարգերը, կիրառման մեթոդաբանություն, աուդիտի ընդգրկման բնագավառները:

1.2. Հրահանգի օգտագործվող հասկացությունները Հրահանգի իմաստով ունեն հետևյալ նշանակությունը՝

1.2.1. «աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտոր»՝ աուդիտորական կազմակերպության աուդիտորական եզրակացությունը ստորագրող աշխատակից,

1.2.2. «աուդիտորական խումբ»՝ աուդիտորական կազմակերպության աշխատակիցների խումբ, որոնք անմիջականորեն ընդգրկված են ներդրումային ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի իրականացման մեջ:

2. ԱՈՒԴԻՏՈՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ /ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ/

2.1. Ընկերությանը աուդիտորական ծառայություններ կարող են մատուցել բացառապես երեք տարվա աուդիտորական աշխատանքի փորձ ունեցող աուդիտորական կազմակերպություններ: Ընդ որում այս չափանիշը չի տարածվում միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունների վրա (Համաշխարհային հաշվապահական տեղեկագրում հրապարակված և http://firm-rankings.vrl-financial- news.com կայքում տեղադրված ցանկում ներառված ըստ

եկամտաբերության լավագույն 10 աուդիտորական կազմակերպություններ):

2.2. Ընկերության Աուդիտոր չի կարող լինել այն Աուդիտորը, որը.

2.2.1. Ընկերությանը մատուցել է հաշվապահական հաշվառման ներդրման, վերականգնման, վարման կամ ֆինանսական հաշվետվությունների կազման ծառայություններ՝ տվյալ ժամանակաշրջանը ներառող հաշվետու տարվա համար,

2.2.2. Ընկերությանը մատուցել է ներքին վերահսկողության հետ կապված ծառայություններ,

2.2.3. Աուդիտորի ղեկավար անձը հանդիսանում է Ընկերության հիմնադիրը (մասնակիցը) կամ Ընկերության ղեկավարը կամ հաշվապահը կամ հաշվապահական հաշվառման վարման համար կամ ֆինանսական հաշվետվությունների կազման համար պատասխանատու անձը, ինչպես նաև մերձավոր ազգակցական կապի (երեխա, ամուսին, ծնող, քույր, եղբայր, պապ, տատ, թոռ, ինչպես նաև ամուսնու երեխա, ծնող, քույր, եղբայր, պապ, տատ, թոռ) մեջ է գտնվում նշված անձանց հետ,

2.2.4. հանդիսանում է Ընկերության կողմից հիմնադրված կամ Ընկերության մասնակցությամբ ստեղծված Աուդիտոր,

2.2.5. Ընկերության հետ ունի որևէ ընդհանուր հիմնադիր (մասնակից),

2.2.6. Ընկերության հետ դատական վեճի մեջ գտնվող անձին մատուցել է կամ մատուցում է տվյալ վեճի հետ կապված խորհրդատվություն:

2.3. Ընկերությունը Աուդիտոր ընտրելիս առաջնորդվում է հետևյալ չափանիշներով.

2.3.1. աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պետք է ունենա ֆինանսական կազմակերպության աուդիտորի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և առնվազն 3 ֆինանսական կազմակերպության աուդիտի իրականացման փորձ և միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման ((օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, ՍԻ-Փի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ) փուլերի առնվազն կեսը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական) կամ Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում,

2.3.2. աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը

պետք է ունենա աուդիտորական կազմակերպությունում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում,

2.3.3. միևնույն պատասխանատու աուդիտորը չի կարող իրականացնել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը, եթե տվյալ ֆինանսական տարվան նախորդող 3 ֆինանսական տարիներին անընդմեջ իրականացրել է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը,

2.3.4. միևնույն աուդիտորական կազմակերպությունը չի կարող 5 տարուց ավել անընդմեջ իրականացնել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը:

3. ԱՈՒԴԻՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Ընկերությունը ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը իրականացնող կազմակերպությանը ընտրում է Ընկերությունում գործող “Հրապարակային մրցույթների կազմակերպման և անցկացման կարգի” համաձայն:

3.2. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշման համաձայն նույն կազմակերպությունը կարող է իրականացնել ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ նաև հաջորդ ֆինանսական տարվա (տարիների) համար: Այդ դեպքում նոր մրցույթ չի կազմակերպվում:

3.3. Ընկերությունը ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող կազմակերպության ընտրությունը հաստատվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշման համաձայն:

4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Աուդիտորական կազմակերպությունը Ընկերության հետ կնքվող պայմանագրով պետք է հաստատի իր համաձայնությունը Կենտրոնական բանկի հրավերով մասնակցելու ներդրումային ընկերության, աուդիտորական կազմակերպության և կենտրոնական բանկի միջև արտաքին աուդիտի արդյունքների քննարկման համար կազմակերպվող եռակողմ հանդիպմանը: